

### Արձանագրություն N3

#### Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

06.11.2014թ. նիստի

#### Օրակարգ

1. Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Սեդա Գասպարյանի թեկնածությունը լեզվաբանություն մասնագիտությամբ ՀՀ ԳԱ թղթակից անդամի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար ներկայացնելու հարցը:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 27-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի ղեկան և գիտխորհրդի նախագահ Ս.Աբրահամյանը հակիրճ ներկայացրեց ՀՀ ԳԱ թղթակից անդամի կոչման համար առաջադրվող թեկնածուի գիտական և գիտամանկավարժական վաստակը և խնդրեց գիտխորհրդի անդամներին արտահայտել իրենց կարծիքները:
- ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Կ.Կարապետյանը նշեց, որ Ս. Գասպարյանի անցած ուղին և գիտական նվաճումները արդարացիորեն դարձնում են նրան այդ կոչման իսկական հավակնորդ: Ա. Ջիվանյանը անդրադարձավ թեկնածուի գիտական վաստակին, կարևորեց նաև հայագիտական ոլորտի նվաճումները, մարդկային բարձր որակները: Չ. Հարությունյանը փաստեց, որ թղթակից անդամ դառնալը շատ պատվաբեր է, և քիչ մարդ կա, որ կարող է արժանի լինել այդ պատվին: Ս. Գասպարյանն իրոք արժանի թեկնածու է, քանի որ նա գիտահետազոտական, գիտամանկավարժական, գիտակազմակերպչական, գիտախորհրդատվական և գիտամիջազգային ոլորտներում լիովին կայացած է մասնագետ է: Նրան նաև հաջողվել է արդի միջազգային լեզվաբանական ուսումնասիրությունները ներմուծել հայագիտության ոլորտ: Թեկնածուի ղեկավարած ամբիոնի քննարկումներն անցնում են խիստ գիտական մթնոլորտում: Շ Պարոնյանը նշեց, որ այսօրվա դրվատանքի խոսքերն իրոք ուղղված են ճիշտ հասցեատիրոջը, և որ Ս. Գասպարյանը ՀՀ ԳԱ թղթակից անդամի լիովին արժանի է թեկնածու է: Մեր հանրապետությունում գիտական բոլոր կասկածները փարատելու ջանուկյանական կերպարը իր արտացոլումն է գտնում Ս. Գասպարյան-լեզվաբանի կերպարում: Ռ. Ղազարյանը, Գ. Մուրադյանը, Ն. Երնջակյանը կարևորեցին առաջադրված թեկնածուի գիտական նվաճումները, մեծ գիտնականին բնորոշ անսահման համբերությունը, հումորի մեծ զգացումը, համեստությունը, ուսանողների և կոլեգաների հետ շփվելու ժողովրդավար վարվեցողությունը, խստապահանջությունը, բժախնդրությունը, պահանջկոտությունը, բարձր գեղագիտական ճաշակը: Ե. Երզնկյանը կարևոր համարեց Ս. Գասպարյանի ՀՀ-ում մասնագիտական առաջին և միակ խորհուրդի կազմում իրականացվող արդյունավետ գործունեությունը: Հ. Բաղդասարյանը կարևորեց Ս. Գասպարյանի դերը երիտասարդ

ամբիոնների կայացմանը նպաստելու գործում: Մ. Գասպարյանը շնորհակալություն հայտնեց գիտխորհրդի անդամներին դրվատանքի անկեղծ խոսքերի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում հաստատեցին ԵՊՀ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Սեդա Գասպարյանի թեկնածությունը՝ մասնակցելու լեզվաբանություն մասնագիտությամբ ՀՀ ԳԱ թղթակից անդամի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

6 նոյեմբերի 2014թ.